



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
**ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ
ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի

31.03.2021 թվականի թիվ

21-03-03-17 որոշմամբ

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) «Հանրային առողջության ֆակուլտետի մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին» կանոնակարգով սահմանվում է Համալսարանի Հանրային առողջության ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման գործընթացում մագիստրոսական թեզերի պաշտպանության հիմնական կանոնները և պայմանները, այդ թվում՝ կառուցվածքը, տեքստային նյութի, հավելվածների ձևավորման կարգը, պաշտպանության ընթացակարգն ու ժամանակացույցը:

1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված Համալսարանի կանոնադրությունը, ՀՀ Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը», սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

1.3. Սույն կանոնակարգն ընդունվել է Եվրոպական բարձրագույն կրթության ավարտական որակավորմանը ներկայացվող իրազեկությունների հաշվառմամբ:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Մագիստրոսական թեզը ուսանողի ինքնուրույն հետազոտական, վերլուծական ավարտուն աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտական ոլորտում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, ինչպես նաև գիտական խնդիրներ բարձրացնելու և նոր լուծումներ առաջադրելու հմտությունները:

2.2. Մագիստրոսական թեզի կատարումը և հրապարակային պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի ավարտական պահանջներից են:

2.3. Մագիստրոսական թեզի նպատակներն են՝

1) համալիր հմտությունների և գիտելիքների ամրապնդում, համակարգային մտածողության ներդրում, մասնագիտական խնդիրները լուծելիս գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ուսանում,

2) որոշումներ ընդունելու հմտությունների զարգացում, փորձի ձեռքբերում հետազոտությունների մշակման, վերլուծության և համակարգման, ինչպես նաև նրանց գործնական նշանակության և կիրառման հնարավոր ոլորտի գնահատման մեջ,

3) փորձի ձեռքբերում սեփական գործունեության արդյունքների ներկայացման և հրապարակայնորեն պաշտպանելու ոլորտում:

2.2. Մագիստրոսական թեզի խնդիրներն են՝

1) ընտրված թեմայի համակարգված վերլուծություններով, հետազոտություններով և հիմնավորումներով ներկայացումը,

2) թեզի և հետազոտության օբյեկտ(ներ)ի ու մեթոդների ճիշտ ընտրությունը,

3) թեզի ելակետային տվյալների հայթայթումը, որոնք անհրաժեշտ են տվյալ թեզի վերլուծության համար,

4) թեզում ներառված և հավաքագրված տեղեկությունների համակարգում՝ գրականության, այլ աղբյուրներից հղումների և սեփական մտքի համադրմամբ և ճշգրիտ վերծանմամբ,

5) կատարված հետազոտության հիման վրա տվյալ մասնագիտական ոլորտում պրակտիկ կիրառման նորույթի և (կամ) նորարական առաջարկ(ներ)ի և (կամ) հետազոտական վերլուծականի ներառում թեզի ավարտական մասում:

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը և հաստատումը

3.1.1. Մագիստրոսական թեզի մասնագիտական որոշակի ոլորտի ընտրության իրավունքն ուսանողին է՝ ուսանողի մագիստրոսական թեզի ղեկավարի հետ խորհրդակցելու պայմանով:

3.1.2. Մագիստրոսական թեզի թեմաներն ուսանողն ընտրում է թեմայի արդիականության, հետազոտական աշխատանքի պարտադիր ներառման և արդյունքների գործնական կիրառության անհրաժեշտության սկզբունքներով:

3.1.3. Մագիստրոսական թեզի թեմաները քննարկվում են համապատասխան ղեկավարների հետ և ներկայացվում հաստատման ուսման երկրորդ կիսամյակի սկզբում:

3.1.4. Մագիստրոսական թեզի թեմաները հաստատվում են Հանրային առողջության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:

3.2. Մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի գործառույթները, իրավունքները և պարտականությունները

3.2.1. Մագիստրոսական թեզի գիտական ղեկավար են նշանակվում մասնագիտական ամբիոնների դասախոսները, ովքեր ունեն գիտական աստիճան, կամ հանրային առողջապահության կամ բիզնես վարչարարության մագիստրոսի աստիճան:

3.2.2. Անհրաժեշտության դեպքում ղեկավար կարող են նշանակվել նաև տվյալ բուհի այլ ամբիոնների դասախոսներ, այլ բուհերի կամ կազմակերպությունների համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներ:

3.2.3. Մագիստրոսական թեզի գիտական ղեկավարները հաստատվում են Հանրային առողջության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:

3.2.4. Մագիստրոսական թեզի ղեկավարը պարտավոր է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1) թեմայի շրջանակներում ուսանողին ուղղորդել անհրաժեշտ գրականության և տվյալների ընտրության հարցերում,

2) անցկացնել խորհրդատվություն հետազոտության պլանի մշակման հարցում,

3) գնահատել կատարված աշխատանքի համապատասխանությունը մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին,

4) ուսանողի հետ պարբերաբար անցկացնել խորհրդատվություններ,

5) վերահսկել ուսանողնի կողմից կատարած աշխատանքները,

6) գրավոր կարծիք տալ թեզը հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ (Հավելված Դ),

7) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում բանավոր ելույթի նախապատրաստման ընթացքում ուսանողնին տրամադրել խորհրդատվություն:

3.2.5. Գիտական ղեկավարի կարծիքում արտացոլվում են.

ա) աշխատանքի արդիականությունը և կարևորությունը,

բ) ուսանողի՝ ինքնուրույն հետազոտություն կատարելու, տվյալներ մշակելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունը,

գ) աշխատանքում գիտական, մեթոդական և/կամ գործնական նորույթ պարունակող տարրերի առկայությունը,

դ) գործնական առաջարկությունների/երաշխավորությունների առկայությունը,

ե) կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները,

զ) թեզի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,

է) երաշխավորություն թեզի հրապարակային պաշտպանության համար:

3.2.6. Մագիստրոսական թեզի վերաբերյալ ղեկավարի բացասական կարծիքի դեպքում թեզը չի թույլատրվում պաշտպանության:

3.2.7. Մագիստրոսական թեզը, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, ենթակա է գրախոսման:

3.3. Մագիստրոսական թեզի կառուցվածքը և շարադրանքը

3.3.1. Մագիստրոսական թեզը ուսանողի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է:

3.3.2. Սույն կանոնակարգով սահմանված մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները պարտադիր պայմաններ են և ենթակա են գնահատման՝ թեզի բովանդակային գնահատման և ներկայացվող այլ պայմանների ընդհանուր համակցությամբ:

3.3.3. Մագիստրոսական թեզում ներառված տեղեկությունների, ցուցանիշերի, բովանդակության և բոլոր տվյալների ճշգրտության համար պատասխանատու է ուսանողը, որպես մագիստրոսական թեզի հեղինակ:

3.3.4. Մագիստրոսական թեզը պետք է հիմնված լինի ուսումնառության ժամանակ ստացած գիտելիքների և սեփական հետազոտական աշխատանքի համակցման վրա:

3.3.5. Մագիստրոսական թեզը պաշտպանության է ներկայացվում

համակարգչային շարվածքով՝ տպագիր (կազմված) և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է «GHEA Grapalat» տառատեսակների կիրառմամբ: Տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և ուղիղ գլխատառերով, 14 pt տառաչափով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Թեզի բոլոր էջերը, ներառյալ աղյուսակները, նկարները, գծապատկերները, հավելված(ներ)ը վերնագրվում և համարակալվում են:

3.3.6. Մագիստրոսական թեզի տիտղոսաթերթն առաջին էջն է, որը չի համարակալվում, լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Ա հավելվածի:

3.3.7. Մագիստրոսական թեզը շարադրվում է տպագիր, որի ծավալը կարող է տատանվել 30-45 էջի սահմաններում, որն իր մեջ չի ներառում տիտղոսաթերթը և հավելվածները: Առանձնահատուկ դեպքերում՝ մագիստրոսական թեզի ղեկավարի թույլտվությամբ, էջերի քանակը կարող է տատանվել, կախված թեմայի բնույթից:

3.3.8. Մագիստրոսական թեզ հիմնական բաղադրիչ մասերն են՝

- սահմանված ձևի տիտղոսաթերթ (Հավելված Ա),
- բովանդակություն,
- համառոտագիր,
- ներածություն՝ ներառելով մագիստրոսական թեզի հիմնական դրույթները,
- հիմնական գլուխներ
- եզրակացություններ և առաջարկություններ
- գրականության ցանկ
- հավելվածներ:

3.3.9. Մագիստրոսական թեզի բովանդակային ցանկում արտացոլվում են մագիստրոսական թեզի բոլոր բաժինները: Բովանդակությունը սկսվում է ներածությունից և ընդգրկում է բոլոր բաժինների, ենթաբաժինների, ինչպես նաև կետերի, ենթակետերի (եթե նրանք անվանում ունեն) անվանումները, եզրակացությունները և առաջարկությունները, օգտագործված աղբյուրների ցանկը, հավելվածների անվանումն ու նշանակությունը՝ նշելով այն էջերը, որտեղից սկսվում են մագիստրոսական թեզի տվյալ տարրերը: Բովանդակությունը չի ներառում տիտղոսաթերթը:

3.3.10. Մագիստրոսական թեզի համառոտագիրը ներառում է թեզի ուսումնասիրության խնդիրը, նպատակ(ներ)ը, հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների, արդյունքների և եզրակացության հակիրճ նկարագրությունը:

3.3.11. Մագիստրոսական թեզերի ներածություն բաժնում հիմանվորվում են թեզի թեմայի արդիականությունը, նրա տեսական և գործնական կարևորությունը, ձևակերպվում են աշխատանքի նպատակները և և ներկայացնում են դրանց հասնելու և լուծման ենթակա խնդիրները:

3.3.12. Մագիստրոսական թեզի հիմնական գլուխները բաղկացած են գլուխներից և ենթագլուխներից: Դրանք ներառում են օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների և կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը և վերլուծությունը, մեկնաբանություններ և գնահատականներ և այլն:

3.3.13. Մագիստրոսական թեզի «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվում են արդյունքներին վերաբերող հակիրճ դատողություններ (մեկնաբանություններ)՝ առաջադրանքի կատարման ամբողջականության և գնահատման վերաբերյալ և առաջարկություններ աշխատանքի արդյունքները տեսականորեն և գործնականորեն կիրառելու վերաբերյալ:

3.3.14. Մագիստրոսական թեզի համար օգտագործված գրականության ցանկը կարող է ներկայացվել հղման միջազգային ընդունված համակարգերից որևէ մեկով: Գրականության ցանկը կարելի է շարադրել այբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակ(ներ)ի ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները (տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը): Ցանկում սկզբից նշվում են հայկական աղբյուրները, ապա ռուսական և արտասահմանյան: Էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու դեպքում նշվում է հեղինակի/ներ/ ազգանունը, անվան առաջին տառը, հոդվածի և (կամ) կազմակերպության անվանումը, համացանցում հոդվածի տեղադրման ամսաթիվը, կայքի հասցեն, հղում կատարելու ամսաթիվը:

3.3.15. Մագիստրոսական թեզի հավելված բաժնում կարող են ներառվել նկարներ, գրաֆիկներ, սխեմաներ, լուսանկարներ, աղյուսակներ, հարցաթերթ, հետազոտության իրազեկված համաձայնության ձև և այլ նյութեր: Տեքստում բոլոր հավելվածների

վերաբերյալ պետք է հղումներ կատարել:

3.3.16. Մագիստրոսական թեզի տեքստը պետք է բավարարի ավարտված աշխատանքներին առաջադրվող հիմնական պահանջներին:

4. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Մագիստրոսական թեզի իրականացման փուլերն են՝

- մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն և հաստատում,
- ուսանողի կողմից հետազոտության պլանի ներկայացում՝ ըստ սահմանված ձևաչափի (Հավելված Բ),
- հետազոտության պլանի հաստատում՝ Համալսարանի Էթիկայի կոմիտեի հանձնաժողովի նիստում,
- հետազոտության փուլ,
- նախապաշտպանության փուլ,
- գրախոսություն,
- պաշտպանություն:

4.2. Ուսանողի կողմից ընտրված մագիստրոսական թեզի թեման ներկայացվում է Հանրային առողջության ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը՝ Հանրային առողջության ֆակուլտետի դեկանատի կողմից սահմանված ժամկետներում:

4.3. Ընտրելով մագիստրոսական թեզի թեման ուսանողը հավաքում է անհրաժեշտ տվյալներ, ուսումնասիրում է հետազոտությանը վերաբերող գրականություն, անց է կացնում համանման խնդիրների շրջանակներում գոյություն ունեցող գրականության վերլուծություն և ներկայացնում է հետազոտական աշխատանքի նախնական պլանը:

4.4. Մագիստրոսական թեզի հետազոտության պլանն ուսանողը ներկայացնում է Համալսարանի Էթիկայի կոմիտեի հանձնաժողովի նիստում քննարկման և հաստատման համար՝ Հանրային առողջության ֆակուլտետի կողմից սահմանված ժամկետներում:

4.5. Մագիստրոսական թեզի հետազոտության փուլն աշխատանքի կատարման բուն ժամանակահատվածն է, որը ներառում է տեսական, գործնական, հետազոտական աշխատանքներ և կազմում մագիստրոսական թեզի կատարման համար հատկացված ժամանակի հիմնական մասը: Հետազոտության փուլի մեջ ներառվում են նաև մագիստրոսական թեզի տեքստի պատրաստումը և պաշտպանության համար անհրաժեշտ այլ նյութի ձևավորումը, սույն կանոնակարգի պահանջներին

համապատասխան:

4.6. Նախապաշտպանության փուլի ժամկետները սահմանվում են Հանրային առողջության ֆակուլտետի դեկանատի կողմից՝ թեզի ղեկավարի վերահսկողությամբ, որի ընթացքում ուսանողն դեկանատ է ներկայացնում մագիստրոսական թեզի «Գրականության տեսության», «Նյութը և մեթոդները» բաժինների նախնական տարբերակը, ինչպես նաև մագիստրոսական թեզի վերջնական տարբերակը՝ ստորագրված ղեկավարի կողմից: Բաժինները ներկայացվում են ըստ Հանրային առողջության ֆակուլտետի դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի:

4.7. Եթե ուսանողը չի կատարում սույն կարգի 4.1.-ից 4.5.-րդ կետերը, ապա չի թույլատրվում մագիստրոսական թեզի պաշտպանությանը, տվյալ ուսումնական տարում: Եթե ուսանողը հարգելի պատճառով չի կատարել սույն կանոնակարգի 4.1.-ից 4.5.-րդ կետերը, ապա կարող է համապատասխան փաստաթղթի ներկայացման և ֆակուլտետի դեկանի թույլտվության դեպքում կրկին թույլատրվել պաշտպանության՝ Հանրային առողջության ֆակուլտետի դեկանատի կողմից հաստատված ժամկետում:

4.8. Մագիստրոսական թեզի վերջնական տարբերակը ներկայացվում է գրախոսման: Գրախոսը գրախոսությունը ներկայացնում է գրավոր (Հավելված Գ): Մագիստրոսական թեզերի գրախոսման համար հրավիրվում են ոլորտի առաջատար կազմակերպությունների, գիտական հիմնարկների և այլ հաստատությունների համապատասխան մասնագետները:

4.9. Մագիստրոսական թեզի գրախոսը պետք է ունենա գիտական աստիճան և (կամ) հանրային առողջության մագիստրոսի աստիճան:

4.10. Մագիստրոսական թեզի գրախոսը պարտավոր է ներկայացնել կարծիք ոչ ուշ, քան թեզի պաշտպանությունից 3 աշխատանքային օր առաջ:

4.11. Մագիստրոսական թեզի պաշտպանությունից 1-2 օր առաջ մագիստրոսը իրավունք ունի ծանոթանալ գրախոսի դիտողություններին և պատրաստել դրանց պատասխանները՝ ընդունելով կամ մերժելով դրանք հիմնավոր փաստարկներով:

4.12. Մագիստրոսական թեզը թույլատրվում է պաշտպանության ղեկավարի դրական կարծիքի պարագայում:

4.13. Մագիստրոսական թեզի մասին գրախոսի բացասական եզրակացությունն արգելք չէ ուսանողի թեզի պաշտպանության համար:

5. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Մագիստրոսական թեզի մշակման ընթացքում ուսանողի պարտականություններն են՝

1) հաշվի առնելով ղեկավարի կարծիքը՝ ընդունել ինքնուրույն որոշումներ,

2) ինքնուրույն վերհանել մագիստրոսական թեզի թեմայի արդիականությունը,

3) ինքնուրույն ձևակերպել մագիստրոսական թեզի նպատակն ու խնդիրները,

4) հավաքել և մշակել մագիստրոսական թեզի թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը,

5) ուսումնասիրել և գործնականորեն վերլուծել ստացված նյութերը,

6) անցկացնել հետազոտություններ, մշակումներ, մագիստրոսական թեզի առարկային համապատասխան,

7) ձևակերպել տրամաբանորեն հիմնավորված եզրակացություններ, առաջարկություններ՝ ստացված արդյունքները գործնականում կիրառելու նպատակով,

8) պատրաստել ելույթ մագիստրոսական թեզի պաշտպանության համար:

5.2. Մագիստրոսական թեզի բովանդակության իսկության պատասխանատվությունը կրում է ուսանողը:

6. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԿԱՐԳԸ

6.1. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի կամ նրա փոխարինողի ներկայությունը պարտադիր է:

6.2. Մագիստրոսական թեզի պաշտպանության թույլատրվում են այն շրջանավատները, ովքեր հանձնել են ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր ստուգարքները և քննությունները և Համալսարանի հանդեպ ֆինանսական պարտավորություններ չունեն:

6.3. Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է ֆակուլտետի դեկանի կարգադրությամբ:

6.4. Նախքան մագիստրոսական թեզի պաշտպանության Հանձնաժողովի նիստը

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի բոլոր անդամներին մագիստրոսական թեզերի գրավոր աշխատանքի գնահատման նպատակով ուղարկում է պաշտպանության նախատեսված բոլոր մագիստրոսական թեզերը, ինչպես նաև տվյալ մասնագիտության համար հաստատված գրավոր աշխատանքի գնահատման թերթիկը (Հավելված Ե, Է), որոնք գնահատված Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացվում են դեկանատ պաշտպանությունից առնվազն 2-3 օր առաջ

6.5. Հանձնաժողովի նիստի ընթացքում ուսանողը ներկայացնում է մագիստրոսական թեզի վերաբերյալ իր բանավոր ելույթը՝ առավելագույնը քսան րոպե տևողությամբ:

Ուսանողի ելույթը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.

- Առաջին մասում ներկայացվում է աշխատանքի թեմայի արդիականությունը, տրվում է հետազոտված խնդրի, ինչպես նաև աշխատանքի նպատակի և խնդիրների նկարագրությունը, որոնց հետ կապված ներկայացվում է թեզում կիրառված հետազոտության մեթոդները և աշխատանքի ընդհանուր կառուցվածքը,
- Երկրորդ մասում ներկայացվում է աշխատանքի գլուխների հակիրճ բովանդակությունը՝ ուշադրություն դարձնելով փաստերին, որի հիման վրա կատարվել է հետազոտությունը, և հիմնական արդյունքները,
- Եզրափակիչ մասում թվարկվում է աշխատանքի ընդհանուր եզրակացությունները և առաջարկությունները:

6.6. Ուսանողի ելույթից հետո Հանձնաժողովի անդամները կարող են հարցեր ուղղել ուսանողին՝ թեզի վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանները պետք է լինեն հստակ և արտացոլեն խնդրի էությունը: Անհրաժեշտության դեպքում հարցերի պատասխաններն պետք է հիմնավորել օրինակներով:

6.7. Ուսանողի ելույթից և հանձնաժողովի անդամների հարցերից հետո կարծիք է ներկայացնում մագիստրոսական թեզի գրախոսը: Գրախոսի բացակայության դեպքում կարծիքը կարդում է հանձնաժողովի նախագահը:

6.8. Ուսանողին տրվում է գրախոսի նկատառումներին և խորհուրդներին արձագանքելու հնարավորություն:

6.9. Հանձնաժողովի անդամները կազմակերպում են թեզի վերաբերյալ բաց քննարկում, որից հետո հանձնաժողովի նախագահը հայտարարում է մագիստրոսական թեզի պաշտպանության ավարտը:

6.10. Հանձնաժողովի անդամները գնահատում են ներկայացված բանավոր ելույթը տվյալ մասնագիտության համար հաստատված գնահատման թերթիկի հիման վրա (Հավելված Զ, Ը):

6.11. Մագիստրոսական թեզը գնահատվում է հետևյալ բաղադրիչների գնահատականների միջին արդյունքով.

- Միջառարկայական համակարգչային քննության գնահատականը,
- Մագիստրոսական թեզի գրավոր աշխատանքի Հանձնաժողովի բոլոր անդամների գնահատականի միջինը,
- Մագիստրոսական թեզի բանավոր ելույթի Հանձնաժողովի բոլոր անդամների գնահատականի միջինը:

6.12. Մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» համաձայն Համալսարանում ընդունված գնահատման 10 բալանոց սանդղակի:

6.13. Մագիստրոսական թեզի գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

6.14. Մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացքը արձանագրվում է և ձայնագրվում:

7. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

7.1. Մինչև ուսումնական տարվա ավարտը Հանրային առողջության ֆակուլտետի դեկանատը՝

1) կազմակերպում է մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմավորման գործընթացը, ըստ մասնագիտությունների և (կամ) կրթական ծրագրերի,

2) Համալսարանի Ուսումնամեթոդական վարչությանը ներկայացնում է առաջարկություններ՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ:

7.2. Մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահի և անդամների թեկնածությունները Համալսարանի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Հանրային առողջության ֆակուլտետի դեկանը:

7.3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ, կարող է նշանակվել

համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական հաստատությունների գիտական աստիճան և համապատասխան որակավորում (հանրային առողջապահության կամ բիզնես վարչարարության մագիստրոս) ունեցող մասնագետներից, ովքեր տվյալ հաստատության աշխատողներ չեն և նախորդող երեք տարիներին չեն եղել տվյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

7.4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչները, համապատասխան ֆակուլտետի ղեկավարը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

7.5. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը՝ ֆակուլտետի ղեկանի ներկայացմամբ, ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ:

7.6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ:

7.7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Համալսարանի ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող՝ հանձնաժողովի կազմից:

7.8. Մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների իրավասությունն է մագիստրոսական թեզերի պաշտպանության գնահատումը՝ սույն կանոնակարգին համապատասխան:

7.9. Իր աշխատանքում Հանձնաժողովն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 7 նոյեմբերի 2017 թվականի թիվ 1282-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգով և սույն կանոնակարգով:

7.10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

ա) ստուգել շրջանավարտի պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

բ) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

գ) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

7.11. Հիմք ընդունելով մագիստրոսական թեզի պաշտպանության դրական («բավարար», «լավ», «գերազանց») արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին:

7.12. Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

7.13. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում:

7.14. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները արձանագրվում են Հանձնաժողովի քարտուղարի կողմից: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետով: Արձանագրության մեջ նշվում են ամփոփիչ քննությունների և (կամ) մագիստրոսական թեզերի գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները, շնորհված որակավորումը, աստիճանը, Համալսարանն ավարտողի դիպլոմի տեսակը և արձանագրության օրինակելի ձևում նախատեսված այլ տեղեկատվություն:

7.15. Մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ «անբավարար» գնահատված ուսանողը հեռացվում է համալսարանից:

7.16. Հեռացված անձանց վերականգնումը հնարավոր է միայն հաջորդ ուսումնական տարում: Վերականգնման դեպքում նշանակվում է մագիստրոսական թեզի նոր թեմա՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով:

7.17. Հաշվի առնելով Հանձնաժողովի աշխատանքների արդյունքները՝ նախագահը կազմում է հաշվետվություն:

7.18. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը քննարկվում է Հանրային առողջության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում:

7.19. Մագիստրոսական թեզի գնահատականը («անբավարար», «բավարար», «լավ», «գերազանց») կարող է բողոքարկվել՝ համաձայն սույն կարգի 8-րդ կետի:

8. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

8.1. Մագիստրոսական թեզի գնահատականը (անբավարար, բավարար, լավ, գերազանց) կարող է Համալսարանում բողոքարկվել և լրացուցիչ քննարկվել համաձայն հետևյալ ընթացակարգային պահանջների՝

1) շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ պարզաբանումներ գնահատականի վերաբերյալ.

2) գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում.

3) շրջանավարտը մագիստրոսական թեզի գնահատականի բողոքարկման վերաբերյալ հանձնաժողովի նախագահին դիմում է մագիստրոսական թեզի արդյունքները հրապարակելուց անմիջապես հետո:

8.2. Մագիստրոսական թեզի գնահատականի բողոքարկումն իրականացվում է շրջանավարտի կողմից հանձնաժողովի նախագահին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա:

8.3. Մագիստրոսական թեզի գնահատականի բողոքարկումն իրականացվում է նույն օրը:

8.4. Բողոքարկման հանձնաժողովը նախապես կազմավորվում է ռեկտորի հրամանով, որի կազմում մտնում են՝

1) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, որպես նախագահ,

2) քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող ուսումնամեթոդական վարչության աշխատողը,

3) Համալսարանի ուսանողական խորհրդարանի ներկայացուցիչը,

4) հանձնաժողովի նախագահի կողմից ներգրավված, քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող Համալսարանի ամբիոններից նեղ մասնագետներ:

8.5. Բողոքարկման հանձնաժողովի նախագահը կարող է բողոքարկման նիստերին հրավիրել քննական հանձնաժողովի անդամներին, քարտուղարներին, ինչպես նաև համապատասխան ամբիոնների մասնագետներին և Համալսարանի իրավաբանական

բաժնի ներկայացուցչին:

8.6. Մագիստրոսական թեզի գնահատման արդյունքների բողոքարկման ընթացքում բողոքարկման հանձնաժողովի անդամները դիտում են տվյալ շրջանավարտի պատասխանի տեսաձայնագրությունը, քննարկում և բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) գնահատականը թողնել անփոփոխ կամ

2) գնահատականը բարձրացնել:

8.7. Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Որոշմանը համաձայն չլինելու դեպքում բողոքարկման հանձնաժողովի անդամը ներկայացնում է գրավոր հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

* * *

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵՋ

Անուն, հայրանուն, ազգանուն

Մասնագիտություն՝

Հանրային առողջություն և առողջապահություն

Թեմա՝

Գիտական ղեկավար՝

ԵՐԵՎԱՆ 2021

**ԵՐԱՆՆԻ ՄԻՏԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ**

Հետազոտության պլանի ծավալը պետք է լինի 4-5 տպագրական էջ, որը չի ներառում տիտղոսաթերթը:

Հետազոտության պլանի տեքստը պետք է հավաքվի համակարգչով՝ A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա (210 X 297) յուրաքանչյուր թղթին 1 էջ 1.5 միջակայքով, սև գույնով, «GHEA Grapalat» տառատեսակների կիրառմամբ, 12 տառաչափով: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 3 սմ, վերևից՝ 2 սմ, աջից՝ 1 սմ, ներքևից՝ 2,5 սմ:

Հետազոտության պլանի բաղադրիչ մասերը՝

1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ
3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ
5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ
6. ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄԸ՝ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
7. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Հղումների ձևաչափը՝

• Հեղինակները ներկայացվում են այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում: Ցանկում սկզբից նշվում են հայկական հեղինակները, ապա ռուսական և արտասահմանյան:

• Գիրք՝ հեղինակի/ներ/ ազգանունը, անվան առաջին տառը, գրքի անվանումը, հրատարակչությունը, քաղաքը, տպագրության տարեթիվը, հատորը, էջերը:

• Հոդված՝ հեղինակի/ներ/ ազգանունը, անվան առաջին տառը, պարբերականի անվանումը, քաղաքը, հատորը, պարբերականի համարը, հոդվածի էջահամարը:

- Համացանց՝ հեղինակի/ներ/ ազգանունը, անվան առաջին տառը, հոդվածի անվանումը, համացանցում հոդվածի տեղադրման ամսաթիվը, կայքի հասցեն, հղում կատարելու ամսաթիվը:

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Մագիստրոսական թեզի գրախոսման չափորոշիչներ

Ուսանող (Ա.Հ.Ա.) _____

Կրթական ծրագիր _____

Թեմայի անվանումը _____

Գրախոս (Ա.Հ.Ա., գիտ. կոչում/աստիճան) _____

Գնահատման չափորոշիչներ

1. Թեմայի արդիականությունը
2. Հետազոտության նորարարությունը
3. Հետազոտության համապատասխանությունը նպատակին
4. Հետազոտության բովանդակության համապատասխանությունը գործող պահանջներին
5. Հետազոտության մեթոդների ճիշտ կիրառումը
6. Տվյալների ճիշտ վերլուծությունը և ներկայացումը
7. Հիմնավորված եզրակացությունների և գործնական առաջարկությունների առկայությունը
8. Հետազոտության համար ընտրված գրականությունը
9. Կատարված աշխատանքի գիտական մակարդակը
10. Ընդունված չափորոշիչներին համապատասխան աշխատանքի ձևակերպում
11. Եզրակացություն մագիստրոսական թեզի պաշտպանության ենթակա լինելու վերաբերյալ

(ստորագրություն)

(Ա.Հ.Ա.)

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Մագիստրոսական թեզի ղեկավարի կարծիք**

Ուսանող (Ա.Հ.Ա.) _____

Կրթական ծրագիր _____

Թեմայի անվանումը _____

Գիտական ղեկավար (Ա.Հ.Ա., գիտ. կոչում/աստիճան) _____

Գնահատման չափորոշիչներ

1. Աշխատանքի համապատասխանությունը նպատակին
2. Աշխատանքի արդիականությունը և կարևորությունը
3. Աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի կողմից ցուցաբերած՝
 - ինքնուրույնության աստիճանը
 - գիտելիքների մակարդակը
 - տվյալներ մշակելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունը
 - ուսումնասիրած գրականության համապատասխանությունը և ծավալը
 - մեթոդաբանության ընտրությունը և կիրառումը
 - մագիստրոսական թեզի կատարման ժամանակացույցի պահպանումը
 - մագիստրոսական թեզի ձևավորման պահանջների պահպանումը
4. Գործնական առաջարկությունների առկայությունը
5. Կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները
6. Եզրակացություն մագիստրոսական թեզի համապատասխանության և պաշտպանության ենթակա լինելու վերաբերյալ

(ստորագրություն)

(Ա.Հ.Ա.)

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Մասնագիտություն՝ «Հանրային առողջություն և առողջապահություն»

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Անուն Ազգանուն _____
Խումբ _____

Ամսաթիվ _____

Ստորև ներկայացված յուրաքանչյուր չափորոշիչ գնահատել սահմանված համապատասխան միավորներով (կարող է օգտագործվել նաև 0.5):

- 1. Ձևազուգ (առավելագույնը 1 միավոր) _____**
 - Տիտղոսաթերթը համապատասխանում է տրված օրինակին:
 - Ձևաչափը համապատասխանում է՝ A4 ֆորմատ, «GHEA Grapalat» տառատեսակ, 12 տառաչափ, տողերի միջև 1.5 միջակայք, էջերի լուսանցքը ծախից՝ 3 սմ, վերևից՝ 2 սմ, աջից՝ 1 սմ, ներքևից՝ 2,5 սմ պարամետրերին:
 - ՄԹ-ի բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, գծապատկերները, հավելվածը վերնագրված և համարակալված են:
 - ՄԹ-ի բոլոր գլուխների անվանումները գրված են ուղիղ գլխատառերով (մեծատառերով, տառաչափը՝ 14):
 - ՄԹ-ի ներկայացման գրելաոճը գիտական է:

- 2. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2-3 էջ (առավելագույնը 1 միավոր) _____**
 - Թեզի բոլոր բաժինների համապատասխան էջերը ըստ հերթականության տրված են:
 - Կիրառված հապավումների ցանկը ներկայացված է:

- 3. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 1 էջ (առավելագույնը 2 միավոր) _____**
 - Թեզի ուսումնասիրության խնդիրը, նպատակը(ները), մեթոդները, արդյունքները և եզրակացությունները հակիրճ ներկայացված են:

- 4. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2-3 էջ (առավելագույնը 3 միավոր) _____**
 - Հետազոտության թեման արդիական է:
 - Նպատակը(ները) հստակ սահմանված է(են):
 - Խնդիրները հստակ ներկայացված են և բխում են հետազոտության նպատակներից:

- 5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 8-10 էջ (առավելագույնը 6 միավոր) _____**
 - Թեզի թեմայի վերաբերյալ տեղական և արտասահմանյան գրականության վերլուծությունը ներկայացված է:
 - Նյութի շարադրումը տրամաբանական է և միտքը կապակցված:

- 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ 4-7 էջ (առավելագույնը 6 միավոր) _____**
 - Հետազոտության նպատակը(ները) հստակ սահմանված է(են):

- Հետազոտության իրականացման վայրը և թիրախը նկարագրված են:
- Հետազոտության նախագիծը նկարագրված է և ընտրությունը հիմնավորված:
- Հետազոտության ընտրանքի հաշվարկը և չափը ներկայացված է:
- Հետազոտության գործիքը մանրամասն նկարագրված է (հուսալիության և պիտանելիության հղումներ):
- Տվյալների մուտքագրման համար կիրառված ծրագիրը, ստուգման և տվյալների վիճակագրական վերլուծության եղանակները նշված են:
- Հետազոտության բարոյագիտական տեսության խնդիրները հասցեագրված են:

7. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 5-8 էջ (առավելագույնը 6 միավոր)___

- Հետազոտության արդյունքում ստացված արդյուքները մանրամասն ներկայացված են և իրատեսական են:
- Ներկայացված արդյուքների հավաստիության ցուցանիշները բերված են:

8. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ 4-7 էջ (առավելագույնը 6 միավոր) _____

- Ստացված արդյուքների տրամաբանական մեկնաբանումը տրված է:
- Հնարավոր պատճառահետևանքային կապերը վերհանված և վերլուծված են:
- Նմանատիպ այլ հետազոտությունների արդյունքների հետ համեմատությունը կատարված է:
- Հետազոտության սահմանափակումները նշված են:

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2-3 էջ (առավելագույնը 6 միավոր)

- Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները մանրամասն ներկայացված են և համապատասխանում են հետազոտության նպատակին:
- Հետազոտության արդյունքների հիման վրա կատարած առաջարկությունները ներկայացված են:
- Ներկայացված առաջարկություններն իրատեսական են և բովանդակալից:

10. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ 2-3 էջ (առավելագույնը 3 միավոր) _____

- Հղումների ճիշտ ձևաչափը պահպանված է:
- Հղումների քանակը համապատասխանում է պահանջներին (15-25 հեղինակ):

Ընդամենը՝ ընդհանուր գումարը կարող է տատանվել 0-40 սահմաններում:

Վերջնական գնահատականը ստացվում է արդյունքը բազմապատկելով 0.25 գործակցով:

Ընդամենը՝ _____

Վերջնական գնահատական _____

(ստորագրություն)

Ա.Հ.Ա.

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Մասնագիտություն՝ «Հանրային առողջություն և առողջապահություն»

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ԲԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Անուն Ազգանուն՝ _____
Խումբ _____

Ամսաթիվ _____

Ստորև ներկայացված յուրաքանչյուր չափորոշիչ գնահատել 0-5 թվերի սանդղակով (կարող է օգտագործվել նաև 0.5), որտեղ՝
0 չափորոշիչը ներկայացված չէ,
3 չափորոշիչը մասամբ է ներկայացված,
5 չափորոշիչը ամբողջությամբ է ներկայացված:

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ _____

- Հետազոտության թեման արդիական է:
- Նպատակը(ները) հստակ սահմանված է(են):
- Խնդիրները հստակ ներկայացված են և բխում են հետազոտության նպատակներից:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ _____

- Հետազոտության իրականացման վայրը և թիրախը նկարագրված են:
- Հետազոտության նախագիծը նկարագրված է և ընտրությունը հիմնավորված:
- Հետազոտության ընտրանքի հաշվարկը և չափը ներկայացված է:
- Հետազոտության գործիքը նկարագրված է:
- Տվյալների մուտքագրման համար կիրառված ծրագիրը և տվյալների վիճակագրական վերլուծության եղանակները նշված են:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ _____

- Հետազոտության արդյունքները լիարժեք ներկայացված են:
- Ստացված տվյալների հավաստիությունը ներկայացված է:

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ _____

- Ստացված արդյունքների տրամաբանական մեկնաբանումը տրված է:
- Հնարավոր պատճառահետևանքային կապերը վերհանված և վերլուծված են:
- Նմանատիպ այլ հետազոտությունների արդյունքների հետ համեմատությունը կատարված է:
- Հետազոտության սահմանափակումները նշված են:

5. ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____

- Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները ներկայացված են և համապատասխանում են հետազոտության նպատակին:

- Հետազոտության արդյունքների հիման վրա կատարած առաջարկությունները ներկայացված են և իրատեսական են:

6. ՄԹ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ _____

- Սլայդերը տրամաբանական հերթականությամբ ներկայացված են:
- Սլայդերը վերնագրված են և ճիշտ ձևաչափը պահպանված է:
- Նկարները և գծապատկերները ինֆորմատիվ են և տեղին օգտագործված:

7. ԺԱՄԱՆԱԿԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է _____

8. ՄԹ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՃԸ _____

- Ներկայացնողը ինքնավստահ և համոզիչ է:
- Տեսողական կոնտակտը լսարանի հետ պահպանված է:
- Խոսքը հստակ է, տրամաբանված և հիմնավորված:

9. ՄԹ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ ՏԱԼԻՍ Է ՍՊԱՌԻՉ ՈՒ ԼԻԱՐԺԵՔ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ _____

10. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ _____

**Ընդամենը՝ ընդհանուր գումարը կարող է տատանվել 0-50 սահմաններում:
Վերջնական գնահատականը ստացվում է արդյունքը բազմապատկելով 0.2 գործակցով:**

Ընդամենը՝ _____ Վերջնական գնահատական _____

(ստորագրություն)

Ա.Հ.Ա.

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Մասնագիտություն՝ «Բուժհաստատությունների կառավարում»

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Անուն Ազգանուն _____
Խումբ _____

Ամսաթիվ _____

Ստորև ներկայացված յուրաքանչյուր չափորոշիչ գնահատել սահմանված համապատասխան միավորներով (կարող է օգտագործվել նաև 0.5):

- 1. Ձևազավթ (առավելագույնը 1 միավոր) _____**
 - Տիտղոսաթերթը համապատասխանում է տրված օրինակին:
 - Ձևաչափը համապատասխանում է `A4 ֆորմատ, «GHEA Grapalat» տառատեսակ, 12 տառաչափ, տողերի միջև 1.5 միջակայք, էջերի լուսանցքը ծախից՝ 3 սմ, վերևից՝ 2 սմ, աջից՝ 1 սմ, ներքևից՝ 2,5 սմ պարամետրերին:
 - ՄԹ-ի բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, գծապատկերները, հավելվածը վերնագրված և համարակալված են:
 - ՄԹ-ի բոլոր գլուխների անվանումները գրված են ուղիղ գլխատառերով (մեծատառերով, տառաչափը՝ 14):
 - ՄԹ-ի ներկայացման գրելաոճը գիտական է:

- 2. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2-3 էջ (առավելագույնը 1 միավոր) _____**
 - Թեզի բոլոր բաժինների համապատասխան էջերը ըստ հերթականության տրված են:
 - Կիրառված հապավումների ցանկը ներկայացված է:

- 3. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 1 էջ (առավելագույնը 2 միավոր) _____**
 - Թեզի ուսումնասիրության խնդիրը, նպատակը(ները), մեթոդները, արդյունքները և եզրակացությունները հակիրճ ներկայացված են:

- 4. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2-3 էջ (առավելագույնը 3 միավոր) _____**
 - Հետազոտության թեման արդիական է:
 - Նպատակը(ները) հստակ սահմանված է(են):
 - Խնդիրները հստակ ներկայացված են և բխում են հետազոտության նպատակներից:

- 5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ և ՄԵԹՈԴՆԵՐԸ 4-7 էջ (առավելագույնը 6 միավոր) _____**
 - Հետազոտության իրականացման վայրը նկարագրված է:
 - Տվյալների հավաքագրման մեթոդները և հետազոտության գործիքը(ները) ներկայացված են:
 - Հետազոտության ընտրանքի հաշվարկը և չափը ներկայացված է (կիրառման դեպքում):

- Տվյալների մուտքագրման համար կիրառված ծրագիրը, ստուգման և տվյալների վիճակագրական վերլուծության եղանակները նշված են (կիրառման դեպքում):

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 3-4 էջ (առավելագույնը 4 միավոր) _____

- Հետազոտության արդյունքները և տվյալների վերլուծությունը ներկայացված են:
- Վերլուծության քննադատական գնահատումը ներկայացված է:

7. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 3-5 էջ (առավելագույնը 6 միավոր) _____

- Հասարակության վարքագծային վերլուծությունը ներկայացված է:
- SWOT վերլուծությունը կատարված է:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՆԱԽԱԳԾԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ 11-16 էջ (առավելագույնը 8 միավոր) _____

- Ռազմավարական ուղղությունները ներկայացված են:
- Մարքեթինգը ներկայացված է:
- Գործընթացները և գործառնությունները ներկայացված են:
- Մարդկային ռեսուրսների կառավարումը և կազմակերպական քաղաքականությունը ներկայացված են:
- Ֆինանսների կառավարումը ներկայացված է:
- Տեղեկատվական կառավարման համակարգերը ներկայացված են:

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2-3 էջ (առավելագույնը 6 միավոր) _____

- Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները ներկայացված են և համապատասխանում են հետազոտության նպատակին:
- Հետազոտության արդյունքների հիման վրա կատարած առաջարկությունները ներկայացված են և իրատեսական են:

10. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ 2-3 էջ (առավելագույնը 3 միավոր) _____

- Հղումների ճիշտ ձևաչափը պահպանված է:
- Հղումների քանակը համապատասխանում է պահանջներին (15-25 հեղինակ):

**Ընդամենը՝ ընդհանուր գումարը կարող է տատանվել 0-40 սահմաններում:
Վերջնական գնահատականը ստացվում է արդյունքը բազմապատկելով 0.25 գործակցով:**

Ընդամենը՝ _____

Վերջնական գնահատական _____

(ստորագրություն)

Ա.Հ.Ա.

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Մասնագիտություն՝ «Բուժհաստատությունների կառավարում»

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ԲԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Անուն Ազգանուն՝ _____
Խումբ _____**

Ամսաթիվ _____

**Ստորև ներկայացված յուրաքանչյուր չափորոշիչ գնահատել 0-5 թվերի սանդղակով
(կարող է օգտագործվել նաև 0.5):**

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ _____

- Հետազոտության թեման արդիական է:
- Նպատակը(ները) հստակ սահմանված է(են):
- Խնդիրները հստակ ներկայացված են և բխում են հետազոտության նպատակներից:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ և ՄԵԹՈԴՆԵՐԸ _____

- Հետազոտության իրականացման վայրը նկարագրված է:
- Տվյալների հավաքագրման մեթոդները և հետազոտության գործիքը(ները) ներկայացված են:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ _____

- Տվյալների վերլուծությունը և արդյունքները ամփոփ ներկայացված են:
- Վերլուծության քննադատական գնահատումը ներկայացված է:

4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ _____

- Հասարակության վարքագծային վերլուծությունը ներկայացված է.
 - շահառու կողմերի վերլուծություն՝ ներառյալ հաճախորդների և/կամ վերջնական օգտագործողի վարքագիծը թեզի առարկայի հանդեպ և դրանց փոփոխությունները և ազդեցությունը:
- SWOT վերլուծությունը կատարված է.
 - ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՆԱԽԱԳԾԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ _____

- Ռազմավարական ուղղությունները ներկայացված են:
- Մարքեթինգը ներկայացված է:
- Գործընթացները և գործառնությունները ներկայացված են:
- Մարդկային ռեսուրսների կառավարումը և կազմակերպական քաղաքականությունը ներկայացված են:
- Ֆինանսների կառավարումը ներկայացված է:
- Տեղեկատվական կառավարման համակարգերը ներկայացված են:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____

- Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները ներկայացված են և համապատասխանում են հետազոտության նպատակին:
- Հետազոտության արդյունքների հիման վրա կատարած առաջարկությունները ներկայացված են և իրատեսական են:

7. ՄԹ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ _____

- Սլայդերը տրամաբանական հերթականությամբ ներկայացված են:
- Սլայդերը վերնագրված են և ճիշտ ձևաչափը պահպանված է:
- Նկարները և գծապատկերները ինֆորմատիվ են և տեղին օգտագործված:

8. ՄԹ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՃԸ _____

- Ներկայացնողը ինքնավստահ և համոզիչ է:
- Տեսողական կոնտակտը լսարանի հետ պահպանված է:
- Խոսքը հստակ է, տրամաբանված և հիմնավորված:

9. ՄԹ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ ՏԱԼԻՍ Է ՍՊԱՌԻՉ ՈՒ ԼԻԱՐԺԵՔ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ _____

10. ԺԱՄԱՆԱԿԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է _____

Ընդամենը՝ ընդհանուր գումարը կարող է տատանվել 0-50 սահմաններում:
Վերջնական գնահատականը ստացվում է արդյունքը բազմապատկելով 0.2 գործակցով:

Ընդամենը՝ _____

Վերջնական գնահատական _____

(ստորագրություն)

Ա.Հ.Ա.